

Մայրաքաղաքս գտնուող Ռուսաստանցի ազգայինք ոչինչ նուազ եռանդեամբ համակրութեան ցոյց կուտան նաև 'ի մասին գործադրութեան ազգային սահմանադրութեան : Եւ թէ իրերը խօսքերու դէմ անհերքելի փաստեր կրնան համարուիլ : սուտէ հասկա Հաճախէին ըսածը թէ Միտիւնէն կալը խղճած է, և անտեղի են իւր բոլոր առարկութիւնները :

Երկու խօսք ալ կոստանդնուպօլսոյ Պատրիարքին ընտրութեանը վրայ ըսենք : Հաճախէիք կը հարցունէ թէ մինչդեռ Տաճկաստանցի եպիսկոպոս մը Եջմիաճնի կաթողիկոս կրնայ ընտրուիլ, ինչո՞ւ համար Ռուսաստանցի եպիսկոպոս մ'ալ կոստանդնուպօլսոյ պատրիարք չ'կրնայ ըլլալ, ըստ Սահմանադրութեան : Բայց չ'գիտեր խեղճը որ իր գործածած փաստն իրեն դէմ պիտի ելնէ : Տաճկաստանցի, ինչպէս նաև Պարսկաստանցի կամ Հնդկաստանցի եպիսկոպոս մը կրնայ կաթողիկոս ընտրուիլ իբրեւ ծայրագոյն և ընդհանրական Պատրիարք ամենայն Հայոց միայն հոգեւոր առումը : Իսկ ուրիշ տէրութեան հոգաւոր եկեղեցական մը չ'կրնար կոստանդնուպօլսոյ պատրիարք ընտրուիլ : պարզապէս վան զի, կոստանդնուպօլսոյ Պատրիարքը քաղաքական պաշտօնատար մ'է զըրեթէ, և անոր ընտրութիւնը Բ. Դրան հաւանութեամբ կը վաւերանայ :

Առ այժմ այս նիւթիս վրայ աւելի երկայն գրել հարկ չ'ենք համարիր : Ամեն արգարտակէր Հայեր, որք միանգամ Սահմանադրութիւնը աչքէ կ'անցունեն, պիտի տեսնեն որ անկիս սոսկ Տաճկաստանի հայոց ներքին գործերուն բարեկարգութեանը կը վերաբերի, եւ հետեւաբար օտար տէրութեանց հպատակ եղող ազգայնոց նկատմամբ ամենեւին յարաբերութիւն չ'ունի : Սրբազան կաթողիկոսին իրաւասութիւնը նոյն է, ինչ որ էր Սահմանադրութեանն յառաջ, այսինքն 'ի կրօնական գլուխ հայաստանեայց եկեղեցւոյ, ուստի ազգութիւնն ու հաւատքն ալ մի է և ոչ բաժանեալ : Օտար Տէրութեանց հպատակ եղող հայերն ալ, որք իրենց Տաճկաստանցի եղբարք բարօրութեանը կը ցանկան, վըստահ ենք որ իրենց ջերմ համակրութիւնը ցոյց տալէ չ'պիտի զլանան, ինչպէս որ չ'զղացան մինչև ցարդ, հակառակ Հաճախէիք և ուրիշ անոր նման յետադէմ թերթերու :

ԲԱՆՍՍԵՂԾԱԿԱՆ

Գեղեցիկ դարութեանց ճաշակն առնողները, որք օրագրոյս մէջ Հրանտի բերթուածները կարդացին, գիտեն թէ ինչ ներդաշնակաւոր փափկութեամբ գրուած են անոնք, և թէ ո՞րքան բնական պարզութեամբ բառերը բանաստեղծին գրին ներքեւ կը հոսին : Ուստի հաճութեամբ կ'ընդունինք հետեւեալ նամակը, որով Մեծապատիւ Օտեան Իֆէնտին, Հրանտի մէկ նոր թարգմանութիւնը կ'ուղարկէ մեզ 'ի հրատարակութիւն : Թարգմանչին արժէքը քննադատութեան վեր է, և շատերը մեզի հետ պիտի համալուին թէ՛ անհնար էր որ հայկական տաղաչափութիւնը ասկէց առաւել ճշտութեամբ բացատրէր Վիկթոր Հիւկոյի «Ռուսականոց» հրաշազան բերթուածը : Այլ թողունք որ Մեծապատիւ նամակախօսը խօսի, և թարգմանութեան գեղեցիկութիւնն ալ ընթերցողները վճռեն :

Խմբագիր

Անոնք որ Զեր խմբագրած թերթին մէջ հաճոյքով կարդացին Հրանտի բանաստեղծութիւնքը, շնորհակալ պիտի ըլլան անտառակոյ տեսնելով հոն ներփակեալ բանաստեղծութիւնը : Ֆրանսերէն չ'գիտցող եւ բանահիւսութեան սիրողներուն ծանօթ է Հիւկոյի «Ռուսականք» անուն քերթուածը : Այս քերթուածին թարգմանութիւնը խնդրեցինք մէկ քանի բարեկամ մեր ազգային բանաստեղծէն : Այն թարգմանութիւնը աչա կը դրկում ձեզի 'ի հրատարակութիւն : Անկարելի էր որ Հիւկոյի այս թրթուական փողերը աւելի գողտրիկ թարգման մ'ունենային հայ լեզուին մէջ, քան յուսամ որ այնպէս պիտի դատեն եւ բանասէրք :

Ողջ կաց, եւ այլն

Գ. Ս. ՕՏԵԱՆ

ՌԻՐՈՒՍԱԿԱՆ

Ա.

Քանի՞ս տեսի կենադրաւ . մին վարդապոյն եւ ճերմակ ճակատադրին են օրէնք . հարկ է մահուան իւր աւար, հարկ է խոտոյ անկանել ընդ սայրասուր մանգաղաւ, հարկ է պարուց 'ի հանգէս զըւարճ կայթից սրավար . կոխել ըզիտունըս վարդից :

Հարկ է ուղիւնց ըսպառիլ յընթանալոյն 'ի ծործոր, հարկ է ցոլալ փայլակին, և 'ի նոյն հապճէպ առնուլ վերջ, հարկ է՝ Ապրիլ նոյնանձատ դիցէ պաղիւ 'ի տոչոր ըզգեղանին ինձորի աստղափրթիմ ծաղկամբ պերճ . Անուշարդը ձիւնի վարնան :

Զի այս են կեանք . յետ լուսոյ երթիմամբ դայ գիշեր, ցետ ամենի, զարթնութիւն 'ի վիզ դժոխոց կամ յերկին, Աշխարհախումբն 'ի խրախճան անյագ ակումբն բաղմբ . Սակայն քանի՞ բաղմանկան լըբեալ պարապ զիւր տեղին եւ ել գրնաց տարածում :

Բ.

Քանի՞ս տեսի կենադրաւ . մին վարդապոյն եւ ճերմակ Միւսն թուէր ականջել երկնափայլի նըւագաց . Այլ ոք, կըլծոտ, ըզմի թեւ դրնէր ճակտին իւր խեչակ, եւ զերդ թուռն հոլթեւ թեքէ զճիւղն յիւրն 'ի սլաց . Հոգեակն երեկ զիւր մարմին :

Մին 'ի նոսա շրջնիլի, ցընորակոծ, վարկահար, Հծծէր յուշիլ անուն մի զոր ամէ ոչ ոք 'ի միտ . Այլ ոք անկեալ թալանայր հանգոյն երգոց 'ի քրնար, եւ այլն 'ի շունչ օրհասին ունէր վանոյլն ժամիս ցերիկից նորեկ հրեշտակին :

Համայնք ծաղկունք վաղանցիկք, և կեանք, աւաղ կործարեւ . Աղիլիմեայք ծովասոյգ հանդերձ բրնկօքն երերուն . Աղու տատրակք զոյս երկինք աըւեալ երկրիս էր պարգեւ, Ոյք շընորհօք եւ սիրով եւ մանկութեամբ վարդապոյն . Զամբն դարնամբ հաշուէին :

Զիարդ . ոչ եւս են նորա, այդպէս կանուխ հոգեցան, Այգքան չըքնաղ աղբիւրներ անարեւակ եւ անխօս Շիշեւափառ այգքան ջահք . այգքան ծաղկունք ցիրեցան . Ահ, թոյլ տուր ինձ առաթուր կոխեալ ըզդէլ թերթից գօս . Գընալ յանառաւ մուար :

Անոյլ ուրուք . անդ 'ի մութ մինչ միտախոհ կամ դեղեր, Նորա անձնիւր գան . խօսիմ, խօսին ընդ իս նորա այլ . Բեկբեկ 'ի լոյս մերթ 'ի յայտ գան, մերթ ծածկին 'ի յըստուեր եւ 'ի միջոյ կողերաց եւ սաղարթուցն մըռալլ . Գիտեմ վաչաց նոցին ցոլս :

Քոյր է հոգիս գեղաղէչ ուրուտեմիկ այն ոգւոց . եւ մեք վաղեմք զօրինօք գերեզմանին եւ կենաց . Մերթ զուգանձեմ եւ մերթ բուռն հարում նոցին ըզթեւոց Անճառ տեսիլ, ուր եւ եմ նոցա նըման մահացած . Այնք կենդանի ինձ նըման :

Ըզճեւս իւրեանց ընծայեն իմ խորհրդոցր բոլոր . Գիտեմ, գիտեմ ըզնոսա . եւ ասեն ինձ, «Եկ առ մեզ . Զեռն 'ի ձեռին կայթեն շորջ յետոյ զիրմաւ պարաւոր ցետոյ տակաւ սուղանին անհետ 'ի մութն ասպարէզ . Եւ եւ խորհիմ եւ յիշմ . . .

Գ.

Մին մանաւանդ . — Հրեշտակ մի, պատանուհի Ըսպանիկ — Ունէր թաթիկ ձիւնաթոյր, ուռնոյր 'ի հեծ լանջն յանմեղ Ագք սեւորակ, ուր շողան դաղթած ընի ակնարկիք . եւ անձանթին այն հրապոյր, եւ այն պըսակ լուսագեղ . Զարդ ճակատուց նորատի :

Եւ մեռաւ նա . ոչ առ սէր . զի 'ի ճակատն այն անամբ Հաճոյք սիրոյ եւ մրցմունք գեռ ոչ էին ազդեցիկ :

նաժիշակները զայն տեսածնուն պէս խօսական ծիծաղ մ'էր փրցուցին, և սկսան ձեռքերնին գտնուած նարինջներն այն պիտի աջողակ կերպով մը այն ձիաւորին վրայ նետելու, որ մէկը գնաց շիտով երեսին դիպաւ:

— Խնտացէ՛ք, անիծեալներ, կանչեց անիկա մատովը զանոնք ցոյց տալով: Երանի՛ թէ այնպիսի խնդայիք որ ակռանիդ ալ մինչև ընտերը մաշէր: Ահա այս կը մաղթէ՛ ձեզի Ձերպին:

Այլ աղջիկներն այնպէս խնդալ կը խնդային, որ քիչ կը մնար կոկորդինն պատուելու և ամենեւին չ'էին դադրէր, ո՛չ փայտահատին սպառնալիքներէն, և ո՛չ իշխանուհւոյն հրամաններէն, որն որ խեղճ Ձերպինին վրայ կը պիտի:

— Աղւորիկ ու սիրուն տիկին, ըսաւ Ձերպին, որ այդպէս անուշիկ բայց ախուր ես, ես քեզի բարիք կը մաղթեմ, իցի՛ն թէ դու սիրէիր զայն որ զառաջինն զքեզ խնտացու նէր, և անոր հետ ալ ամուսնանայիր: Ձի քու առօրեայ տիրութիւնդ ալ կրնար փարատել:

Աս ըսելով իր մազերուն փունջը վերցուց, ու ամենէն շնորհալի կերպով իշխանուհւոյն բարեւ մը տուաւ:

Ընդհանուր կանան. երբ որ փայտի վրայ կը հեծնաւ մարդու բարեւ մի՛ տար, թէ և թագուհի ըլլայ դիմացինդ. Ձերպին տսիկա մուգաւ և իրեն զիւնուն չար եկաւ, վասն զի իշխանուհին բարեւելու համար, ոտներն իրարու կապող չուանին ծայրը ձեռքէն գացած էր, որով փայտերը ցրուեցան, ու պարզամիտ Ձերպինը խիստ կոշտ և ծիծաղաշարժ կերպով մը կոնակին վրայ ինկաւ: Ոտերն ալ ոգին մէջ բարձրաւ նալով մնացին: Այլ արագ մը գլորուելով տեղէն ելաւ, տեղաներուն կէսն իր հետը տանելով, և Սիզուանոս գից պէս պատկուած, տասը քայլ անդին գնաց փաթ, ինկաւ:

Երբոր մէկը մահացու կերպով կ'իյնայ ինչո՛ւ համար վրբան կը խնտան: — Ես չ'գիտեմ — ասիկա հրաշք մըն է, զոր փիլիսոփայութիւնը տակաւին չ'է բացատրեր: Սյրբան միայն դիտեմ որ ամէն մարդ ալ կը խնտայ, ու Ալէքի իշխանուհին ալ ամէն մարդու պէս ըրաւ: Բայց յանկարծ ցատկեց նստած տեղէն ելաւ, սիրալաւ ու գորովալիք աչքերով Ձերպինը դիտել սկսաւ, և մէյ մը ձեռքը սրտին վրայն զնէր, մէյ մ'իւր գլուխը կը տանէր, ու վերջապէս անձանսթ յուզմամբ մը շփոթած չի կրնալով իւր պլլլլութիւնը զսպել պալատը մտաւ:

Իսկ Ձերպին ցիր և ցան եղած ոտները ժողվեց ու սոսկ փայտ կրողի մը պէս ոտքով իր տնակը դարձաւ: Յաջորդութիւնը զինքը չ'էր շարունակեր, ձախորդութիւնն ալ զինքը չ'որոտ մեցուց: Բաւական էր որ այն օրն աղէկ կերպով անցուց: Կոմիչի կաթով շինուած, մարմարիոնի պէս ճերմակ ու կարծր պանիր մ'առաւ, անկից երկայն կտոր մը կտրեց և զմայլելի ախորժակով մ'ալ ճաշակեց: Անմեղը չ'էր գիտէր թէ ինչ չարիք պատճառած կամ ինչ շփոթութիւնն ձգած էր իրմէ ետք:

Ե.

Այս ծանր դէպքերը պատահած ատեն, երեկոյեան ժամը չորսը կը զարնէր Սալէրնի մեծ աշտարակին վրայ: Օրը բուրդակէզ էր, և փողոցներուն մէջ լուութիւնը կը թագաւորէր: Յաճ սենեկի մը մէջ քաշուած, օրուան տաքութենէն և աղմուկներէն հեռու, Մուշափէլ թագաւորն իր ժողովրդեան երջանկութիւնը կը խորհէր և կը նիւրհէր:

Յանկարծ ընդստեալ արթնցաւ երկու բազուկ կը սեղմէին իր վիզը և ջերմաջերմ արտասուք կը թանային իր երեսը: ասիկա գեղեցիկ Ալէքին էր որ գորովանօք եկեր իր հայրը կը դնէր:

— Այս ի՞նչ է, ըսաւ թագաւորը անոր սիրոյն սննդէս կրկնուէն զարմանալով: Դու զիս կը գրկես և կարտասուես: Ահ, մ'որդ աղջիկը, անշուշտ կամք մ'ունիս ինձ կատարել տալու:

— Ընդ հակառակն բարի հայրս, ըսաւ Ալէքի, քու հնազանդ աղջիկդ ձեր ուզածը պիտի ընէ: Ձեր բաղձացած փեսան գտայ, և ձեզի հաճոյ ըլլալու համար պատրաստ եմանոր հետ կարգուելու:

— Եստ աղէկ, կրկնեց Մուշափէլ: Թերեւս ասիկայ

ցնորից վերջն է. նայինք մի՛ է ընտրած ամուսինդ, Քալուպի իշխան — Ոչ: Քարթիկի կոմսն է. արեւմտ ամենեւին: Արբէնդի մարքիզը — Ոչ: Հապա: Վէ:

— Ես ալ չ'եմ ճանչնար: Հայր իմ:

— Ինչպէ՛ս. դու զայն չ'ես ճանչնար: Բայց ես այնպէս զինքը տեսած եմ:

— Այո՛, դեռ հիմա, ամարանոցի հրապարակին վրայ:

— Հետք խօսած է:

— Ոչ, հայր իմ, խօսելու հարկ կայ երբ որ սիրտերն իրար կը հասնան:

Մուշափէլ գէմը խորտեցաւ, ականջը քերեց, և երկու աչքերուն մէջէն աղջկանը վրայ նայելով:

— Գոնէ՛, ըսաւ, իշխանն է:

— Չեմ գիտեր, հայր իմ, բայց ասիկա ի՞նչ պէտք է:

— Եստ պէտք է, աղջիկս, դու բաղաբախանութիւնը չ'ես հասկնար: Անտարակոյ աղէկ կ'ըլլայ թէ որ աղատութեամբ ընտրես ինծի յարմար փեսայ մը, իբրեւ թագաւոր եւ իբրեւ հայր ես քու կամքդ չ'եմ բռնաբարեր, միայն թէ իմ կամքս ալ այնպէս ըլլայ: Եթէ ո՛չ ես ալ իմ ընտանեացս ու հպատակացս պարտաւորութիւններ ունիմ կատարելու, և ի՞նչեմ որ իմ ըսածս ըլլայ: Ահ, կը պահուի այն գեղեցիկ թուշուր, զոր դու չ'ես ճանչնար, հետք խօսած չ'է և զքեզ կը պաշտէ:

— Չեմ գիտեր, ըսաւ Ալէքի:

— Զարմանալի բան, դուք Մուշափէլ: Այսպիսի խնդութիւններ պատմելու համար է որ ժողովրդեանս բարութեամբ խորհելու խորհելու վերաբերեալ վայրկեաններս եկեր պարագը կը վառնես: Անեկապեաք, իշխանուհւոյն նաժիշտները կանչեցէք որ ապարանքը տանին զինքը:

Այս խօսքերը լսելուն պէս, Ալէքի բազուկները դէպ ի երկինք վերցուց և լալ սկսաւ, յետոյ հեծկաւորով թագաւորին առջև ծուռ չոզեցաւ նոյն վայրկեանին երկու նաժիշտներն ալ ներս մտան միշտ բարձրաձայն ծիծաղելով:

— Լուծի՛ն, լուծառականք, լուծի՛ն. դուք թագաւորը անոնց այս անվայել ընթացքէն զարմանալով:

Բայց ինչքան որ թագաւորը լուծի՛ն կը պոռար, այնչափ ալ նաժիշտները կը խնդային, առանց արքունեաց սովորութիւնը հոգ ընելու:

— Պահպանք, ըսաւ թագաւորը ինքիբմէ դուրս ելած, բռնեցէք այս լիպնէրն ու անոնց զուրկ կտրեցէք: Թող գիտնան ապուշները որ թագաւոր մը իրենց զուարճալիք չի կրնար ըլլալ:

— Տէ՛ր Արքայ, ըսաւ Ալէքի ձեռքերը տարածելով, չի չեցէք որ ձեր թագաւորութիւնը փառաւորեցիք՝ մահուան պատիժը վերցունելով:

— Խաւառք ունիս, աղջիկս: Մենք քաղաքակրթիւն եմք թող այս կանայց խնայեն, եւ բաւական է որ զանոնք Ռուսական եղանակաւ պատժեն, կարելի եղած արգահատութիւնն ընելով: Գաւառանով ծեծեցէք զանոնք մինչև որ բնական կերպով մեռնին:

— Ենորհ՛ ըրէք, հայր իմ, ըսաւ Ալէքի, ես ձեր աղջիկը՝ կը խնդրեմ ձեզէն: . . .

— Տէ՛ր աստուած, ալ թող չ'իմոյան և զիս անհանգիստ չ'ընեն, ըսաւ բարեխիտ Մուշափէլ Տարէք ու անբանութեամբ, ես անոնց կրնեմք, փոքանի մէջ նետեցէք, մինչև որ հոն լուծեմք և ձանձրութեամբ ճաթին:

— Ահ, հայր իմ, հեծեց խեղճ Ալէքի:

— Երուով, ըսաւ թագաւորը, թող կարգէն զանոնք և բանը ըմնայ:

— Ենորհ՛, Տէ՛ր Արքայ, ալ չ'ենք խնդար, աղաղակեցին երկու նաժիշտները ծուռ ծուռ չոզելով և այնպիսի բերան մը բանալով, որուն մէջ լինալէն պատուիր թան չ'էր մնացեր: Ձեր վեհափառութիւնը թէ՛ մեզի ներէ՛, թէ՛ թագաւոր, սատանայական արուեստի մը զոհ եղանք, եղեռնաւոր մը զմեզ հմայեց:

— Իմ Տէ՛րութեան մէջ կոխարդ գտնուի՛, ըսաւ թագաւորը, որն որ զօրաւոր միտք մ'ունէր, ասիկայ անհաս ըին է, կոխարդ չ'կայ, քանզի ես չ'եմ հաւատար:

— Տէ՛ր Արքայ, ըսաւ նաժիշտներուն մէկը, բնական է արդեօք որ փայտի խուրձ մը վարժ ձիւ մը պէս քալէ և փայտահատի մը ձեռքին ներքև շրջի: Ահա ասիկա տեսանք հիմա մենք ամարանոցի՝ հրապարակին վրայ:

Մասնաւոր հետեւեալ Բառով

ՊԵՏՏՕՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ա. ՃԼՎԱՀԻՐՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ. Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱԿ